

ՎԵՐԱԲԱՆ

Առաջն ուսումնասիրությամբ փորձ ենք արել բացահայտելու հայոց տնտեսական գրադարձներից մեկը՝ ծիրականության ժողովողական ձևերն ու հմտությունները 19-20-րդ դարերում:

Դաշտային ազգագրական նյութերով հնարավորություն ունեցանք ճշտելու հայոց երկրագործական մշակրյալ կարևորագույն ճյուղերից մեկը՝ ծիրակում մշակաբույսերի տեսականին, դրանց տարածվածությունը, մշակման ժողովողական հմտություններն ու ձևերը:

Դայաստանի նախալեռնային և լեռնային շրջաններին բնորոշ ծիրակուններն են եղել կտավատը, սորեկը, հլածուկը, մանամեխը և այլն: Դրանք մշակվել են ծովի մակերեսից մինչև 2200մ բարձր տարածքներում, որը փաստորեն երկրագործական մշակրյալ վերին սահմանն է համարվում: Այս բույսերը երկրագործական մշակրյալ համակարգում անփոխարինելի են, քանի որ, շնորհիվ աճի կարծատև վեգետացիսյի, ամառվա մի քանի ամիսների ընթացքում հասունանում և կայուն բերք են տալիս, ընդ որում՝ առանց արհեստական ռոռոգման: Կտավատը հայոց մեջ հայտնի է նաև վուշ ձևով, որն այդ բույսի թելատու տարատեսակն է:

Երկրի հարթավայրային, ցածրադիր տարածքներին բնորոշ ծիրակուու բույսերն են եղել քնչութք, տգկանները և կանրջակը:

Հայոց տնտեսական կենցաղում հատկապես նշանակալի է եղել քնչութիւնը, որը տնտեսական կարևոր նշանակություն է ունեցել: Այն բարձր է գնահատվել հատկապես սննդի համակարգում: Ուշագրավ է քնչութիւնը կրրասությունը հայ եկեղեցում լայնորեն կրրառվող մեռոնի պատրաստման ասպարեզում: Մեռոնի հիմնական բաղադրամասերից մեկը ձեքն է: Այժմ մեռոնը պատրաստվում է ծիրայուղից, բայց ավանդաբար հայոց մեջ այդ նպատակով օգտագործվել է քնչութիւնը: Դարեւ շարունակ Հայ առաքելական եկեղեցին պայքար է մղել հումադավան եկեղեցու

ճնշումների դեմ, որի պահանջներից մեկն էլ մեռոնում ծիրայուղի օգտագործումն էր քնչութիւնը:

Մեզ չհաջողվեց ճշգրտորեն պարզել, թե որ դարում է հայ եկեղեցին անցել ծիրայուղին, բայց մի շարք վկայությունների հիման վրա ենթադրում ենք, որ դա տեղի է ունեցել 13-րդ դարում:

Տգկանեփի ձեթը առավելապես օգտագործվել է տեհրիկական նպատակներով:

Որպես ձեթի ստացման լրացուցիչ հումք, շատ վայրերում օգտագործվել են նաև ընկույզ, տկրողին, նուշ և որոշ մրգերի ու մշակաբույսերի սերմեր:

Աշխատանքում փորձել ենք դասակարգել հայոց ավանդական ծիրականության արտադրական կառույցները, որոնք տարածված են եղել պատմական Հայաստանի ողջ տարածքում: Միջնադարյան բոլոր նշանավոր վանքերն ու եկեղեցիները ունեցել են սեփական, երբեմն՝ մի քանի ծիրիան:

Հայերենի գանագան խոսվածքներում ձեթի ստացման արտադրական կառույցվածքները հայտնի են ծիրականք, ծիրիաց, սրանց և այլ անվանումներով: Կառույցվածքային սրոշակե տարբերություններ ունենալով հանդերձ, իրենց հորինվածքով և առանձին արտադրամասերի ու գործընթացների անվանումներով, դրանք համահայկական բնույթ են կրում:

Չիրիանների որոշ արտադրամասերի և բաժանմունքների անվանումներ նույնությամբ անցել են նաև հարևան ժողովուրդներին:

Քնչութիւնը վերամշակող արտադրական կառույցները ժողովողական խոսվածքում կրչվել են ծիրակուն կամ դայախրանա և, կապված այդ բույսի մշակրյալ գոտու հետ, տարածված են եղել Արարատյան դաշտում և Շարուրում:

Ցավոք, արտադրական ավանդական մյուս կառույցների նման, ինչպիսիք են ջրադացները, հնձանները և այլն, ծիրիանները մոռաց-

վել և գրեթե վերացել են: Հայաստանի բազմաթիվ բնակավայրերում, որպես երբեմնի գոյության անժիշտելի վկաներ, պահպանվել են դրանց աղացաքարերը միայն:

Հայաստանի ծիրագործական ավանդական խոշոր կենտրոններում՝ Շիրակում, Գեղարքունիքում և Սյունիքում անհրաժեշտ է, որպես ժողովրդական ճարտարասպետության նմուշներ վերականգնել մեկական ծիրիան: Արարատյան ծիրատան վերականգնումը նպատակահարմար է Սարդարապատի թանգարանի տարածքում:

Աշխատանքում փորձ է արվել լուսաբանելու ծիրատու բույսերի, ծերի և ծիրամթերքների օգտագործման ամենատարրեր ասպարեզները հսյոց մեջ: Այդ բնագավառները բազմազան են. շինարարություն, սննդի համակարգ, ժողովրդական բժշկություն, նյութական և հոգևոր մշակույթի տարբեր ասպարեզներ և այլն:

Եթե ինչ-որ չափով հասկանալի է ծիրիաների ճակատագիրը, ապա պարզապես զարմանալի և ցավալի է, որ մեզանում փաստորեն մոռացության է տրվել ծիրատու բույսերի մշակությունը, որոնց հումքը կարելի է վերամշակել ժամանակակից գործարաններում: Զարգացած խաղողագողություն, սյգեգործություն և բանջարաբուծություն ունեցող Արարատյան դաշտում գուցե հնաբավոր և նպատակահարմար չէ հողամասեր տրամադրել քննչութի մշակությանը, սակայն անհրաժեշտ է

Հայաստանի բարձրադիր շրջաններում, հատկապես Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի. Արագածոտնի և Կոտայքի մարզերում վերականգնել կտավատի մշակությունը և ծերի արդյունաբերական արտադրությունը: Դա դեռևս հնարավոր է անել, քանի որ Շիրակի մարզի մի քանի բարձրադիր բնակավայրերում հիմա էլ մարդիկ կան, որ շարունակում են զբաղվել կտավատի մշակությամբ, տիրապետում են դրա մշակության ժողովրդական հմտություններին և որոշակի աջակցության առկայության դեպքում կարող են մեծ նպաստ բերել այս գործին:

Նետազուտությունը նպատակ չի ունեցել մշակելու տնտեսական ավանդական այս ճյուղի վերականգնման առաջարկություն, սակայն ուսումնասիրության արդյունքում իյիստ կարևորվում է տնտեսության այս ճյուղի արդյունավետությունը: Տնտեսական ծանր պայմաններում գտնվող մեր երկրի ու ժողովրդի համար այն կարող է ինչ որ չափով նպաստել վիճակի բարելավմանը: Հազարավոր հեկտար վարելահողեր չեն մշակվում, մի զգալի մասը վեր է ածվել արոտավայրերի, այս դեպքում, երբ դրանց օգտագործումը ավանդական, մոռացված մշակաբույսերի վերականգնմանը, կարող է նյութական և ֆինանսական լուրջ ներդրում լինել թե գյուղական բնակչության և թե պետության համար: Իա թելադրվում է հազարամյակներ զոյատևած ավանդույթի ուժով և արդի պահանջարկով: